# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Աղավնատուն համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ,
գ.Աղավնատուն, Ն.Մաթևոսյան պող. 25, Հեռ. (0231)60075 ,
aghavnatun.armavir@mta.gov.am

N Ա-151
*30 հուլիս 2014թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ
Ձեզ ենք ներկայացնում Աղավնատուն գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 22-ի թիվ 5 հերթական նիստի որոշումները:
Առդիր թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Աշոտ Գրիգորյան

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Զոհրաբյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2014թվականի N 28

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասով ՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 22-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԵԴԻԿ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

22.հուլիս 2014թվական
գ.Աղավնատուն

ՀԱՎԵԼՎԱԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՍԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**2014ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ <<22>>-Ի**
**N 28 ՈՐՈՇՄԱՆ**

## ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՍԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՍԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

3. ԱՂԱՎՆԱՍԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ,,ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ,, ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N40-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

4. ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

5. «ԱՂԱՎՆԱՍԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ԱՂԱՎՆԱՍԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

6.ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*7.* ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

*8.* ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

*9.* ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N14 ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

*10.* ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2014թվականի N 29

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 230.0 հազար (երկու հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Սույն որոշմամբ սահմանված հաշվարկները կիրառել 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՄԻՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

22.հուլիս 2014թվական
գ.Աղավնատուն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2014թվականի N 30 -Ն

## ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ,,ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ,, ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N40-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան գյուղապետարանի աշխատակազմի և «Կրթություն և մշակույթ » միացյալ տնօրինության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Աղավնատան գյուղապետարանի և «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N40-Ն որոշումը:
3.Սույն որոշմամբ սահմանված հաշվարկները կիրառել 2014թվականի հուլիսի 1-ի դրությամբ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6　　　Դեմ -0　　　Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

<u>22.հուլիս 2014թվական</u>

գ.Աղավնատուն

Հավելված N 1
ՀՀ Արմավիրի մարզի
Աղավնատուն գյուղական
համայնքի ավագանու
2014թ. հուլիսի 22-ի
թիվ 5 հերթական նիստի
N 30որոշման

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| | 2014թ հաստատված | | |
|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնի դրույքաչափը |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 230000 |
| 2 | Համ.ղեկ.տեղակալ | 1 | 184000 |
| | | | |
| | Ընդամենը | 2 | 414000 |
| | Գյուղապետարանի աշխատակազմ | | |
| 1 | Գյողապետարանի աշխատակազմի. քարտուղար | 1 | 184000 |
| 2 | Գլխ. մասնագետ | 1 | 180000 |
| 3 | Առաջատ.մասնագետ | 2 | 290000 |
| 4 | I-ին կարգի մասնագետ | 2 | 268000 |
| 5 | II-րդ կարգի մասնագետ | 1 | 133000 |
| | | | 1055000 |
| | Ընդամենը | 7 | |
| | Տեխնիկական սպասարկող անձնակազմ | | |
| 1 | Այգեպան | 1 | 66140 |
| 2 | Վարորդ | 1 | 130000 |
| 3 | Գործավարուհի -քարտուղարուհի | 1 | 111000 |
| 4 | Հավաքարար | 1 | 66140 |
| 5 | Տրակտորիստ | 1 | 66140 |
| | Ընդամենը | 5 | 439420 |
| | | | |
| | Ամբողջը | 14 | 1908420 |

Հավելված N 2
ՀՀ Արմավիրի մարզի
Աղավնատուն գյուղական
համայնքի ավագանու
2014թ. Հուլիսի 22-ի
թիվ 5 հերթական նիստի
N 30 որոշման

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| | 2014թ հաստատված | | |
|---|---|---|---|
| | Պաշտոնի անվանումը | միավոր | Պաշտոնի դրույքաչափը |
| 1 | Տնօրեն | 1 | 103500 |
| 2 | Գրադարանի վարիչ | 1 | 86000 |
| 3 | Գլխավոր հաշվապահ | 1 | 85000 |
| 4 | Գեղմասվար | 1 | 80500 |
| 5 | Հրահանգիչ-խմբավար | 1 | 66140 |
| 6 | Մասնագետ-մեխանիկ | 1 | 66140 |
| 7 | Օժանդակ բանվոր | 1 | 66140 |
| 8 | Հավաքարար | 1 | 66140 |
| 9 | Պահակ | 2 | 186400 |
| | Ամբողջը | 10 | 805960 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

22 հուլիսի 2014թվականի N 31-Ն

## ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

Աղավնատուն գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 43-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1.01 բաժնի 1 խմբի 1-ին դասում՝
1)4251 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված 3000.0 հազար(երեք միլիոն) ՀՀ դրամ ծախսը պակասեցնել 3000.0 հազար(երեք միլիոն) ՀՀ դրամի չափով
2)5121 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված 7000.0 հազար(յոթ միլիոն) ՀՀ դրամ ծախսը պակասեցնել 1000.0 հազար(մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով.
2.01 բաժնի 6 խմբի 1 դասում՝
1) 4251 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված 2300.0 հազար (երկու միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ ծախսը ավելացնել 2000.0 հազար (երկու միլիոն ) դրամի չափով.
2) 5112 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսել 4700.0 հազար (չորս միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի ծախս.
3) 5133 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված 10000.0 հազար(տաս միլուն) ՀՀ դրամ ծախսը պակասեցնել 3000.0 հազար (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով
4) 5134 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսել 500.0 հազար (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի ծախս.
3. 04 բաժնի 5 խմբի 1 դասում՝
1) 5113 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված 1339.6 հազար(մեկ միլիոն երեք հարյուր երեսուն իննը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ծախսը պակասեցնել 1000.0 հազար(մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով.
2) 5134 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված 200.0 հազար (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի ծախսը պակասեցնել նույնքան դրամի չափով:
4. 04 բաժնի 5 խմբի 1 դասում 4521 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսել 2000.0 հազար (երկու միլիոն) ՀՀ դրամի ծախս:

5. Պահուստային ֆոնդի 2628.7 հազար (երկու միլիոն վեց հարյուր քսանութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարը պակասեցնել 1000.0 հազար (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով, այն թողնել 1628.7 հազար (մեկ միլիոն վեց հարյուր քսանութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**<u>22 հուլիս 2014թվական</u>**
**գ.Աղավնատուն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 հուլիսի 2014թվականի N 32

## ,,ԱՂԱՎՆԱՏԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ,, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ,,ԱՂԱՎՆԱՏԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ համայնքի **ավագանին որոշում է.**

1.Հաստատել «Աղավնատան բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով որպես «Աղավնատան բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ ՀՈԱԿ) վերակազմավորելու մասին համայնքի ղեկավարի 18.07.2014 թվականի N20-Ա որոշումը:
2. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել Աղավնատան համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1):
3. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն համաձայն Հավելված 1-ի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:
4. Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի ու շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:
5. Հաստատել՝
   ա/ ՀՈԱԿ-ի գույքի կազմը՝ համաձայն Հավելված 2-ի:
   բ/ ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

6.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ՀՈԱԿ-ի պետական գրանցումը՝ Ընկերության միջոցների հաշվին:
7.Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային

կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Աղավնատուն համայնքի ղեկավարին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

<u>22 հուլիս 2014թվական</u>

գ.Աղավնատուն

Հավելված 1
Աղավնատուն համայնքի ավագանի
22.07.2014թ
N 32 որոշման

Գույքի կազմ
համայնքային հաշվեկշիռ հանձնվող

| Հ/Հ | Հանձնվող գույքի կազմը | Քանակը | Մեկ միավորի հաշվեկշռային արժեքը | Ընդանուր գումարը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համակարգիչ | 1 | 122096 | 122096 | |
| 2 | Լազերային տպիչ | 1 | 81060 | 81060 | |
| 3 | մոնիտոր | 1 | 25602 | 25602 | |
| 4 | լաբորատոր գործիքների սեղան | 1 | 46272 | 46272 | |
| 5 | հիվանդի հետազոտման թախտ | 2 | 34148 | 68296 | |
| 6 | բարուրման սեղան | 1 | 36787 | 36787 | |
| 7 | դեղորայքի պահարան | 3 | 76265 | 228796 | |
| 8 | քարտերի պահարան | 1 | 37742 | 37742 | |
| 9 | գրասեղան | 2 | 28841 | 57682 | |
| 10 | պահարան | 2 | 39658 | 79316 | |
| 11 | բժշկական սարքերի սեղան | 2 | 31539 | 63078 | |
| 12 | ախտահանիչի սեղան | 2 | 43894 | 87789 | |
| 13 | շիրմա | 3 | 35427 | 106281 | |
| 14 | բժշկական աթոռ | 2 | 39028 | 78056 | |
| 15 | կշեռք մեծահասակ | 1 | 38305 | 38305 | |
| 16 | կշեռք մանակական | 1 | 24442 | 24442 | |
| 17 | էլեկտրասրտագիր | 1 | 347862 | 347862 | |
| 18 | հետազոտման լապտեր | 2 | 24157 | 48314 | |
| 19 | էլեկտրական տաքացուցիչ | 1 | 17000 | 17000 | |
| 20 | սառնարան | 1 | 47306 | 47306 | |
| 21 | գլյուկոմետր | 1 | 14079 | 14079 | |
| 22 | ավտոկլավ | 1 | 383953 | 383953 | |
| 23 | Ա Մ Բ Ու | 1 | 46066 | 46066 | |
| 24 | լսողության չափման կամեռտոն | 1 | 68245 | 68245 | |
| 25 | ցենտրիֆուգ | 1 | 65031 | 65031 | |
| 26 | տեսողության ստուգման աղուսյակ | 1 | 16781 | 16781 | |
| 27 | մոնիկուլյար միկրոսկոպ | 1 | 160000 | 160000 | |
| 28 | սեղան | 1 | 25673 | 25673 | |
| 29 | պահարան | 1 | 51550 | 51550 | |
| 30 | աթոռ | 1 | 19132 | 19132 | |
| 31 | պահարան | 1 | 90876 | 90876 | |
| 32 | ՀՀ գերբ | 1 | 11160 | 11160 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 33 | օֆթալմոսկոպ | 1 | 10957 | 10957 |
| 34 | պատգարակ ծալովի | 1 | 37131 | 37131 |
| 35 | զննման սեղան | 1 | 73291 | 73291 |
| 36 | ավտոկլավ 14լ | 1 | 113678 | 113678 |
| 37 | պահարան | 1 | 31886 | 31886 |
| 38 | պահարան | 1 | 24925 | 24925 |
| 39 | սեղան | 1 | 44109 | 44109 |
| 40 | գրասեղան | 1 | 20030 | 20030 |
| 41 | DVD | 1 | 12393 | 12393 |
| 42 | հեռուստացույց | 1 | 42282 | 42282 |
| 43 | մանկական հետազոտման սեղան | 1 | 13799 | 13799 |
| 44 | նորածնի կշեռք | 1 | 43740 | 43740 |
| 45 | օպտալմոսկոպ | 1 | 54675 | 54675 |
| 46 | բազմոց | 1 | 26834 | 26834 |
| 47 | անդրադարձային տեսածրիչ | 1 | 4213620 | 4213620 |
| 48 | տեսատպիչ ջերմային | 1 | 601425 | 601425 |
| 49 | գրասեղան | 3 | 70000 | 210000 |
| 50 | հիվանդի զննման թախտ | 1 | 90600 | 90600 |
| 51 | ադմինիստրատիվ կանգնակ | 1 | 367000 | 367000 |
| 52 | բժշկական պահարան | 2 | 61000 | 122000 |
| 53 | գրասեղան | 3 | 36160 | 108480 |
| 54 | հանդերձարանի պահարան | 1 | 28800 | 28800 |
| 55 | պլաստիկ աթոռ | 5 | 10000 | 50000 |
| 56 | դեղորայքի պայուսակ | 1 | 15000 | 15000 |
| 57 | ավտոմեքենա /Գ Ա Զ-32214/ | 1 | 5877381 | 5877381 |
| 58 | գրասեղան | 1 | 30530 | 30530 |
| 59 | պահարան | 1 | 37990 | 37990 |
| 60 | հետազոտման մահճակալ | 1 | 34670 | 34670 |
| 61 | մանկական հետազոտման սեղան | 1 | 18930 | 18930 |
| 62 | նորածնի կշեռք հասակաչափով | 1 | 60000 | 60000 |
| 63 | հիվանդի հետազոտման թախտ | 1 | 10000 | 10000 |
| 64 | էլեկտրական տաքացուցիչ | 1 | 10000 | 10000 |
| 65 | սեղան | 1 | 10000 | 10000 |
| 66 | սեղան | 1 | 10000 | 1000 |
| 67 | նորածնի կշեռք հասակաչափով | 1 | 43740 | 43740 |
| 68 | գրասեղան | 1 | 30530 | 30530 |
| 69 | պահարան | 1 | 37990 | 37990 |
| 70 | հետազոտման մահճակալ | 1 | 34670 | 34670 |
| 71 | մանկական հետազոտման սեղան | 1 | 18930 | 18930 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 72 | գրասեղան | 1 | 10000 | 10000 |
| 73 | պահարան | 1 | 10000 | 10000 |
| 74 | շիրմա | 1 | 10000 | 10000 |
| 75 | պատգարակ | 1 | 10000 | 10000 |
| 76 | պահարան | 1 | 24925 | 24925 |
| 77 | գրասեղան | 1 | 30530 | 30530 |
| 78 | պահարան | 1 | 37990 | 37990 |
| 79 | հետազոտման մահճակալ | 1 | 34670 | 34670 |
| 80 | մանկական հետազոտման սեղան | 1 | 18930 | 18930 |
| 81 | նորածնի կշեռք հասակաչափով | 1 | 60000 | 60000 |
| | | 101 | | 15463689 |

Հավելված 2
Ավագանու համայնքի ավագանի
22.07.2014թ
N 32 որոշման

## Գույքի կազմ
## ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող և սեփականության իրավունքով հանձնվող

| Հ/Հ | Հանձնվող գույքի կազմը | Քանակը | Մեկ միավորի հաշվեկշռային արժեքը | Ընդանուր գումարը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համակարգիչ | 1 | 122096 | 122096 | |
| 2 | Լազերային տպիչ | 1 | 81060 | 81060 | |
| 3 | մոնիտոր | 1 | 25602 | 25602 | |
| 4 | լաբորատոր գործիքների սեղան | 1 | 46272 | 46272 | |
| 5 | հիվանդի հետազոտման թախտ | 2 | 34148 | 68296 | |
| 6 | բարուրման սեղան | 1 | 36787 | 36787 | |
| 7 | դեղորայքի պահարան | 3 | 76265 | 228796 | |
| 8 | քարտերի պահարան | 1 | 37742 | 37742 | |
| 9 | գրասեղան | 2 | 28841 | 57682 | |
| 10 | պահարան | 2 | 39658 | 79316 | |
| 11 | բժշկական սարքերի սեղան | 2 | 31539 | 63078 | |
| 12 | ախտահանիչի սեղան | 2 | 43894 | 87789 | |
| 13 | շիրմա | 3 | 35427 | 106281 | |
| 14 | բժշկական աթոռ | 2 | 39028 | 78056 | |
| 15 | կշեռք մեծահասակ | 1 | 38305 | 38305 | |
| 16 | կշեռք մանակական | 1 | 24442 | 24442 | |
| 17 | էլեկտրասրտագիր | 1 | 347862 | 347862 | |
| 18 | հետազոտման լապտեր | 2 | 24157 | 48314 | |
| 19 | էլեկտրական տաքացուցիչ | 1 | 17000 | 17000 | |
| 20 | սառնարան | 1 | 47306 | 47306 | |
| 21 | գլյուկոմետր | 1 | 14079 | 14079 | |
| 22 | ավտոկլավ | 1 | 383953 | 383953 | |
| 23 | Ա Մ Բ Ու | 1 | 46066 | 46066 | |
| 24 | լսողության չափման կամեռտոն | 1 | 68245 | 68245 | |
| 25 | ցենտրիֆուգ | 1 | 65031 | 65031 | |
| 26 | տեսողության ստուգման աղյուսակ | 1 | 16781 | 16781 | |
| 27 | մոնիկուլյար միկրոսկոպ | 1 | 160000 | 160000 | |
| 28 | սեղան | 1 | 25673 | 25673 | |
| 29 | պահարան | 1 | 51550 | 51550 | |
| 30 | աթոռ | 1 | 19132 | 19132 | |
| 31 | պահարան | 1 | 90876 | 90876 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 32 | ՀՀ գերբ | 1 | 11160 | 11160 |
| 33 | օֆթալմոսկոպ | 1 | 10957 | 10957 |
| 34 | պատգարակ ծալովի | 1 | 37131 | 37131 |
| 35 | զննման սեղան | 1 | 73291 | 73291 |
| 36 | ավտոկլավ 14լ | 1 | 113678 | 113678 |
| 37 | պահարան | 1 | 31886 | 31886 |
| 38 | պահարան | 1 | 24925 | 24925 |
| 39 | սեղան | 1 | 44109 | 44109 |
| 40 | գրասեղան | 1 | 20030 | 20030 |
| 41 | DVD | 1 | 12393 | 12393 |
| 42 | հեռուստացույց | 1 | 42282 | 42282 |
| 43 | մանկական հետազոտման սեղան | 1 | 13799 | 13799 |
| 44 | նորածնի կշեռք | 1 | 43740 | 43740 |
| 45 | օպտալմոսկոպ | 1 | 54675 | 54675 |
| 46 | բազմոց | 1 | 26834 | 26834 |
| 47 | անդրադարձային տեսածրիչ | 1 | 4213620 | 4213620 |
| 48 | տեսատպիչ ջերմային | 1 | 601425 | 601425 |
| 49 | գրասեղան | 3 | 70000 | 210000 |
| 50 | հիվանդի զննման թախտ | 1 | 90600 | 90600 |
| 51 | ադմինիստրատիվ կանգնակ | 1 | 367000 | 367000 |
| 52 | բժշկական պահարան | 2 | 61000 | 122000 |
| 53 | գրասեղան | 3 | 36160 | 108480 |
| 54 | հանդերձարանի պահարան | 1 | 28800 | 28800 |
| 55 | պլաստիկ աթոռ | 5 | 10000 | 50000 |
| 56 | դեղորայքի պայուսակ | 1 | 15000 | 15000 |
| 57 | ավտոմեքենա /Գ Ա Զ-32214/ | 1 | 5877381 | 5877381 |
| 58 | գրասեղան | 1 | 30530 | 30530 |
| 59 | պահարան | 1 | 37990 | 37990 |
| 60 | հետազոտման մահճակալ | 1 | 34670 | 34670 |
| 61 | մանկական հետազոտման սեղան | 1 | 18930 | 18930 |
| 62 | նորածնի կշեռք հասակաչափով | 1 | 60000 | 60000 |
| 63 | հիվանդի հետազոտման թախտ | 1 | 10000 | 10000 |
| 64 | էլեկտրական տաքացուցիչ | 1 | 10000 | 10000 |
| 65 | սեղան | 1 | 10000 | 10000 |
| 66 | սեղան | 1 | 10000 | 1000 |
| 67 | նորածնի կշեռք հասակաչափով | 1 | 43740 | 43740 |
| 68 | գրասեղան | 1 | 30530 | 30530 |
| 69 | պահարան | 1 | 37990 | 37990 |
| 70 | հետազոտման մահճակալ | 1 | 34670 | 34670 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 71 | մանկական հետազոտման սեղան | 1 | 18930 | 18930 |
| 72 | գրասեղան | 1 | 10000 | 10000 |
| 73 | պահարան | 1 | 10000 | 10000 |
| 74 | շիրմա | 1 | 10000 | 10000 |
| 75 | պատգարակ | 1 | 10000 | 10000 |
| 76 | պահարան | 1 | 24925 | 24925 |
| 77 | գրասեղան | 1 | 30530 | 30530 |
| 78 | պահարան | 1 | 37990 | 37990 |
| 79 | հետազոտման մահճակալ | 1 | 34670 | 34670 |
| 80 | մանկական հետազոտման սեղան | 1 | 18930 | 18930 |
| 81 | նորածնի կշեռք հասակաչափով | 1 | 60000 | 60000 |
| | | 101 | | 15463689 |

Հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Աղավնատուն
Համայնքի ավագանու

<<22>><<07>>2014թ. N 32 որոշմամբ

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն

համայնքի ղեկավար_______________

Աշոտ Գրիգորյան

Կազմվեց՝____,_____2014թ-ին____ թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ

Օրինակ______

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

<<____>><<__________>> 2014թ-ին

Գրանցամատյան թիվ______________

Վկայական________________________

ՀՎՀՀ____________________________

________________________________

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# <<ԱՂԱՎՆԱՏԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>>

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Աղավնատան բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Համայնքային կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու 22-07-2014 թվականի N32 որոշման համաձայն «Աղավնատան բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը, որին էլ փոխանցվում են բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան:

2. Համայնքային կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

3. Համայնքային կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Աղավնատուն համայնքն է ի դեմս Աղավնատուն համայնքի ավագանու:

4. Համայնքային կազմակերպության կառավարման լիազոր մարմինն է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Լիազոր մարմին), որն ունի Համայնքային կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

5. Համայնքային կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

6. Համայնքային կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ: Համայնքային կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել

պարտականություններ, դատարանում հանդես գալ, որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Համայնքային կազմակերպությունն այլ կազմակերպությունների հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Համայնքային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել տեղական առողջապահական կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ:

9. Համայնքային կազմակերպությունն ունի իր անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

10. Համայնքային կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

11. Համւսյնքային կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Աղավնատան բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

հայրեն կրճատ՝ «Աղավնատան բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ «AraBHaTyHCKafl MeflUL^MHCKafl aM6y/iaTopnfl» o6mnHHafl

HeKOMepsecKafl

opraHM3aLLMfl

ռուսերեն կրճատ՝ «AraBHaTyHCKafl MefltmnHCKaa aM6y/iaTopwfl» OHO

անգլերեն լրիվ՝ «Medical Clinic of Agavnatun» Community Non-Profit Organization

անգլերեն կրճատ՝ « Medical Clinic of Agavnatun» CNPO

12. Համայնքային կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գ. Աղավնատուն

## ||. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

13. Համայնքային կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են.

1) բնակչության առողջության պահպանումը, բարելավումը,

2) առողջ ապրելակերպի քարոզչությունը,

3) հիվանդությունների կանխարգելումը,

4) պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը:

14.Համայնքային կազմակերպությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

15.Համայնքային կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով, հիմնադրի որոշման հիման վրա, հանդիսանալ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից:

16.Համայն քային կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

1)բժշկական օգնություն և սպասարկում ( բացի պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման)

## III .ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

17.Համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը,դրա լիազորած համայնքային մարմինը (Աղավնատուն համայնքի ղեկավարը) և գործադիրմարմինը (այսուհետ՝ տնօրեն):

18. Լիազոր մարմինը՝

1) իրականացնում է համայնքային կազմակերպության ընդհանուր կառավարումը,ապահովում նրա բնականոն գործունեությունը և կրում պատասխանատվություն դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան՝ ստեղծում է համայնքային կազմակերպության հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ.

3) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է նրա կառավարման մարմինները և վաղաժամկետ դադարեցնում դրանց լիազորությունները.

4) իրականացնում է վերահսկողություն համայնքային կազմակերպության գործունեության նկատմամբ.

5) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում համայնքային կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

6) լսում է համայնքային կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության արդյունքները.

7) իրականացնում է վերահսկողություն համայնքային կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

8) վերահսկողություն է իրականացնում համայնքային կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ.

9) օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս համայնքային կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար.

10) հաստատում է համայնքային կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվեկշիռը, տարեկան ֆինանսական և այլ հաշվետվություններ.

11) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

19. Համայն քային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է համայնքային կազմակերպության տնօրենը, ով պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է (նրա լիազորությունները դադարեցվում են) լիազոր մարմնի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20. Տնօրենը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է համայնքային կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի, համայնքային կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

21. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով համայնքայինկազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված գույքային վնասի համար:

Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չի հանդիսանում պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

22. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով տնօրենը կարող է համայնքայինկազմակերպությունում իրականացնել նաև մասնագիտական վճարովի այլ աշխատանք:

23. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս համայնքային կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է համայնքային կազմակերպության գույքը այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է համայնքային կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում համայնքային կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) սահմանում է համայնքային կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

## IV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

24. Համայնքային կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև համայնքային կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքից:

25. Համայնքային կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեից.

2) կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից.

3) Հայաստանի Հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից.
իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ արտերկրի) կողմից կատարված ներդրումներից, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումներից, նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից.

4) Համայնքային կազմակերպության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքներից.

6) կազմակերպության գույքից և գույքային իրավունքներից ստացված եկամուտներից.

7) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

26. Համայնքային կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

27. Համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ համայնքային կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

28. Համայնքային կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է համայնքային կազմակերպությունը :

29. Համայնքային կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

30. Համայնքային կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է ֆինանսական վերստուգման (աուդիտի)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վերահսկողության այլ ստորաբաժանման կողմից:

31. Համայնքային կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է ինքնուրույն՝ հիմնադրի կողմից սահմանված կարգով, իր առջև դրված նպատակների իրականացման համար:

32. Հիմնադիրը կարող է համայնքային կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից համայնքային կազմակերպությանն ամրացված գույքը:

33. Համայնքային կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու կամ հանձնելու անհատույց օգտագործման:

34. Համայնքային կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

35. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները և ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարները համայնքային կազմակերպության սեփականությունն են:

36. Համայնքային կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնելու ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

37. Հիմնադրի կողմից համայնքային կազմակերպությանը գույքն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու,համար:

38. Հիմնադրի կողմից համայնքային կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի և պարտադիր պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ համայնքային կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

## V. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

39. Համայնքային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս համայնքային մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաևհամայնքային ոչ առևտրային կազմակերպության:

40. Համայնքային կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

41. Համայնքային կազմակերպության լուծարմամբ գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

42. Համայնքային կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Համայնքային կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: Համայնքային կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

43. Համայնքային կազմակերպության լուծարման դեպքում համայնքային կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2014թվականի N 33

### ԱՂԱՎՆԱՏՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի երրորդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ

1. Հաստատել 2014 թվականի հունիս ամսին Աղավնատան գյուղապետարանի ձեռք բերած մեկ հատ էլեկտրոնային շչակ C-40, մեկ հատ A-բլոկը գույքագրման ցուցակներում ներառելու հետևանքով կատարած փոփոխությունները:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**22 հուլիս 2014թվական**
**գ.Աղավնատուն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2014թվականի N 34

## ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի վեցերորդ մասով և 16-րդ հոդվածի 27-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Տալ համաձայնեցում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի 2014 թվականի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի :
2.Համայնի ղեկավարին Աղավնատուն գյուղական համայնքի հողային հաշվեկշիռը սահմանված կարգով համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանման հետ:
3. Համայնի ղեկավարին Աղավնատուն գյուղական համայնքի՝ հողային հաշվեկշիռը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:
4.Հաստատել Աղավնատուն գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի նախագծանախահաշվային առաջադրանիքի նախագիծը՝ համաձայան հավելվածի:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ

4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

22 հուլիս 2014թվական
գ.Աղավնատուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արավնատուն գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի «հուլիսի»«22»
N 34 որոշման

Ձև N 22

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01.07.2014 թ.)

Մարզ: Արմավիր (անվանում) — 4 (Կոդ)

Համայնք: Արավնատուն (անվանում) — 230 (Կոդ)

(հեկտարներով)

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը (2+3+4+8+12) | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | Սեփականության սուբյեկտ — համայնքային: ընդամենը (5+6+7) | համայնքային: տրված անհատույց օգտագործման | համայնքային: տրված վարձակալության | համայնքային: օգտագործման և վարձակալության չտրված | պետական: ընդամենը (9+10+11) | պետական: տրված անհատույց օգտագործման | պետական: տրված վարձակալության | պետական: օգտագործման և վարձակալության չտրված | Օտար պետութ-ի, կազմ-ի և ՀՀ-ում կաց-ն հատուկ կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 229.63 | 177.68 | | 51.95 | 2.70 | 37.65 | 11.60 | | | | | |
| 1.2 | | բազմ. տնկարկներ, | | 126.60 | 117.44 | | 9.16 | | 9.15 | 0.01 | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում` պտղատու այգի | | 29.90 | 22.17 | | 7.73 | | 7.72 | 0.01 | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 96.70 | 95.27 | | 1.43 | | 1.43 | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 1.4 | | արոտ | | 360.30 | 229.52 | | 130.78 | | 45.32 | 85.46 | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 95.20 | 2.70 | | 92.50 | | | 92.50 | | | | | |
| 1 | | Ընդամենը | | 811.73 | 527.34 | | 284.39 | 2.70 | 92.12 | 189.57 | | | | | |
| 2.1 | 2.Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 130.24 | 130.24 | | | | | | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում` տնամերձ հողեր | | 130.24 | 130.24 | | | | | | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառ-ն) | | | | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական | | 3.66 | | | 1.56 | | | 1.56 | 2.10 | | | 2.10 | |
| 2.3 | | խառը կառուցապատման | | | | | | | | | | | | | |
| 2.4 | | ընդհանուր օգտագործման | | 41.24 | | | 41.24 | | | 41.24 | | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 25.87 | | | 25.87 | | | 25.87 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 201.01 | 130.24 | | 68.67 | | | 68.67 | 2.10 | | | 2.10 | |
| 3.1 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. | արդյունաբերության | | | | | | | | | | | | | |
| 3.2 | | գյուղատնտեսական, | | 11.34 | 4.69 | | 6.65 | | | 6.65 | | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | | | | | | | | | | | | |
| 3.4 | | ընդերք օգտագործման | | 94.68 | | | 94.68 | | 94.68 | | | | | | |
| 3 | | Ընդամենը | | 106.02 | 4.69 | | 101.33 | | 94.68 | 6.65 | | | | | |
| 4.1 | 4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ | Էներգետիկայի | | 0.13 | | | 0.13 | | | 0.13 | | | | | |
| 4.2 | | կապի | | | | | | | | | | | | | |
| 4.3 | | տրանսպորտի | | 2.60 | | | | | | | 2.60 | | | 2.60 | |
| 4.4 | | կոմունալ ենթակառուցվածք | | 0.02 | | | 0.02 | | | 0.02 | | | | | |
| 4 | | Ընդամենը | | 2.75 | | | 0.15 | | | 0.15 | 2.60 | | | 2.60 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում` արգելոցներ | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | արգելավայրեր | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային պարկեր | | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | | | | | | | | | | | | |
| 5.4 | | պատմական և | | 4.95 | | | 4.72 | | | 4.72 | 0.23 | | | 0.23 | |
| 5 | | Ընդամենը | | 4.95 | | | 4.72 | | | 4.72 | 0.23 | | | 0.23 | |
| 6 | 6.Հատուկ նշանակության | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | | | | | | | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | | | | | | | | | | | | |
| 8.2 | | ջրամբարներ | | | | | | | | | | | | | |
| 8.3 | | լճեր | | 2.07 | | | 2.07 | | | 2.07 | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | 2.82 | | | 0.56 | | | 0.56 | 2.26 | | | 2.26 | |
| 8.5 | | հիդրոտեխ. և ջրտնտ. այլ | | | | | | | | | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 4.89 | | | 2.63 | | | 2.63 | 2.26 | | | 2.26 | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9.1 | 9. Պահուստային | արոտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի հողեր | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9) | | | | 1131.35 | 662.27 | | 461.83 | 2.70 | 186.80 | 272.39 | 7.19 | | | 7.19 | |

Համայնքի ղեկավար________________

ԱԳԿՊԿ տարածքային մարմնի ղեկավար________________

ՆԱԽԱԳԻԾ
**Հաստատում եմ՝**
**ՀՀ Արմավիրի մարզի**
**համայնքի ղեկավար՝**
**Ա. Գրիգորյան**
«18» «հունիս» «2014 » թ.

Հավելված
Աղավնատուն ՀՀ Արմավիրի մարզի
Աղավնատուն համայնքի ավագանու
22.07.2014թ. N34 որոշման

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

**ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի մշակման**

1. **Համայնքի հիմնական բնութագիրը**

**Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը 1131.35 հա**
**բնակչության թիվը 3581 մարդ,**

բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝
0-ից մինչև 6 տարեկան երեխաներ 233 մարդ,
7-ից մինչև 17 տարեկան դպրոցահասակներ 352 մարդ,
աշխատունակ հասակի բնակչություն 2823 մարդ,
թոշակառուներ 389 մարդ,

| | |
|---|---|
| **հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝** | |
| **բնակավայրի հողեր** | **201.01 հա** |
| **այդ թվում՝** | |
| բնակելի | 130.24 հա |
| այդ թվում՝ | |
| տնամերձ | 130.24հա |
| հասարակական | 3.66 հա |
| խառը | |
| ընդհանուր օգտագործման | 41.24 հա |
| այլ հողեր | 25.87 հա |
| **գյուղատնտեսական նշանակության հողեր** | **811.73 հա** |
| **այդ թվում՝** | |
| վարելահող | 223.23 հա |
| բազմ. տնկարկներ | 133.00 հա |
| այդ թվում՝ | |
| պտղատու այգի | 29.90 հա |
| խաղողի այգի | 103.10 հա |
| խոտհարք | - |
| արոտ | 360.30 հա |
| այլ հողեր | 95.20 հա |

| | |
|---|---|
| **արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ հա** | **106.02** |
| **այդ թվում՝** | |
| արդյունաբերության | - |
| գյուղարտադրության | 11.34 հա |
| պահեստարանների | - |
| ընդերք | 94.68 հա |
| **էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝** | **2.75հա** |
| **այդ թվում՝** | |
| էներգետիկայի | 0.13 հա |
| կապի | |
| տրանսպորտի | 2.60 հա |
| կոմունալ | 0.02 հա |
| **հատուկ պահպանվող տարածքներ՝** | **4.95 հա** |
| բնապահպանական | |
| այդ թվում՝ | |
| արգելոցներ | |
| արգելավայրեր | |
| ազգային | |
| առողջարանական | |
| հանգստի | |
| պատմական և մշակութային հողեր | 4.95 հա |
| **ջրային հողեր** | **4.89 հա** |
| **այդ թվում՝** | |
| գետեր | |
| ջրամբարներ | |
| լճեր | 2.07 հա |
| ջրանցքներ | 2.82 հա |
| հիդրոտեխ. և ջրտնտ. | - |

**Անտառային, հատուկ նշանակության և պահուստային հողեր համայնքի հողային հաշվեկշռում չկան:**

Հողային ֆոնդի ցուցանիշները բերված են 2013 թվականին հաստատված հողային հաշվեկշռով և ենթակա են ճշտման օրենսդրությամբ սահմանված կարգով:

**տարածքներն ըստ սեփականության ձևերի՝**

| | |
|---|---|
| այդ թվում՝ | |
| պետական սեփականություն՝ | 101.87 հա |

համայնքային սեփականություն 367.21 հա
ֆիզիկական անձանց սեփականություն 562.27 հա
իրավաբանական անձանց սեփականություն 100.0 հա

**Բնակելի ֆոնդը ըստ հարկայնության**

ցածրահարկ առանձնատներ 650 միավոր 136000 քմ. մակերեսով:

**Բնակչության մշակութային և կենցաղային սպասարկման համակարգը**

հանրակրթական դպրոց՝ 350 աշակերտական տեղով, որտեղ հաճախում են 332 աշակերտ: Համայնքն ունի մշակույթի տուն և գրադարան:

**Ինժեներական սարքավորումներ և բարեկարգում**

ընդհանուր ջրօգտագործում տնտեսական և
խմելու նպատակով 1.3 հազ. խոր/մ մարդ/օր
էլեկտրամատակարարում 1860.0 մլն. կվ/ժամ/տարի
համայնքում գազի ծախսը 362.6 խոր/մետր

## 2. Ռեսուրսների հիմնական տեսակը, արտադրության գերիշխող ճյուղերը, ինժեներատրանսպորտային ապահովվածությունը

գյուղատնտեսական նշանակության հողեր, քարի հանք,

*տվյալների համայնքում առկա բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային և այլ պաշարների վերաբերյալ*

այգեգործություն, բանջարաբուծություն, անասնապահություն

*տվյալների համայնքում առկա արտադրության գերիշխող ճյուղերի վերաբերյալ*

Համայնքի ջրամատակարարումն ապահովվում է 90% Բազմաբերդի, 10% Նազրվանի ջրաղբյուրներից, համայնքը կոյուղացված չէ, ապահոված է էլեկտրամատակարարման ցանցերով:

Ինժեներական համակարգերի առկա իրավիճակի փաստագրման և հեռանկարային զարգացման մասով նախագծային աշխատանքներն իրականացնելիս համագործակցել էներգետիկ ցանցերը տնօրինող, շահագործող ՀԷՑ «Մասիսի» մասնաճյուղի հետ:

*տվյալներ համայնքի ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ*

## 3. Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.

Դաշտավարություն, բանջարաբուծություն, անասնապահություն, քարի արդյունահանում:

Առաջիկա տարիներին առաջնահերթ կարգով անհրաժեշտ է իրականացնել մսուր-մանկապարտեզի կառուցման, մշակույթի տան, գրադարանի, բուժամբուլատորիայի շենքի վերանորոգման, առանձին փողոցների գիշերային լուսավորության անցկացման, խմելու ջրագծերի պլաստմասե խողովակներով փոխարինման, համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման, երիտասարդ, աճող ընտանիքներին տնամերձ հողամասերով ապահովում:

*համայնքի զարգացման ծրագրից բխող՝ սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջները*

4. Նախագծման հիմքը.

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, համայնքի ավագանու 2013 թվականի հաստատված բյուջեն, համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 5-ի N 1 որոշումը:

**5. Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները.**

ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծը հաստատելու մասին» N 610-Ն, 2007 թվականի մարտի 15-ի «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն, 2002 թվականի հոկտեմբերի 3-ի «ՀՀ Արմավիրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 1589-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 13-ի նիստով հաստատված «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգերի դրույթները և 2010 թվականի հունվարի 14-ին ընդունված ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները», համայնքի ավագանու որոշմամբ հաստատված՝ «Համայնքի 2013-16 թթ. զարգացման քառամյա ծրագիր» (21-ը փետրվարի 2013թ-ի N 3-Ն որոշում):

---

*որոշումների ընդունման ժամկետները, համարը, (կցել պատճենները)*

**6. Քաղաքաշինական (այդ թվում՝ հատուկ կարգավորման օբյեկտների), գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանությանը, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջները.**

Բնակելի, հասարակական, արտադրական նշանակության կառուցապատման համար տարածքների արդյունավետ օգտագործում, շրջակա միջավայրի, լանդշաֆտների, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությանը նպատակաուղղված միջոցառումների նախատեսում:

Համայնքի վարչական տարածքում նշել պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների տարածքներ՝ 2.5 հա:

Բնակավայրի տարածքային զարգացումը նախատեսել բնակության համար անվտանգ և բարենպաստ միջավայրի ձևավորման, տրանսպորտի, կապի, ինժեներական, սոցիալական ենթակառուցվածքների կատարելագործման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից (այդ թվում՝ երկրաշարժից) տարածքների պաշտպանության, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների ապահովմամբ՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 429 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 138-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների:

Հնարավորինս զերծ մնալ պետության կամ համայնքի կարիքների համար քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող

հողամասեր վերցնելու անհրաժեշտություն ենթադրող լուծումներից, իսկ նման առաջարկությունների պարագայում ներկայացնել հիմնավորումներ՝ այլընտրանքային լուծումների կամ դրանց բացակայության վերաբերյալ:

*պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջները, նշել սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ դրանց առկայության դեպքում*

## 7. Տեղեկատվություն համայնքում առկա ելակետային տվյալների վերաբերյալ (առկայության դեպքում)

1987 թվականին մշակված կադաստրային և հողօգտագործման քարտեզները, տվյալներ տարածքի փաստացի օգտագործման վերաբերյալ, տվյալներ բնակելի, հասարակական և արտադրական կառուցապատման վերաբերյալ, տվյալներ կոմունալ տնտեսության և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի առկա իրավիճակի մասին, դեմոգրաֆիկ տվյալներ, համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների պատճեններ:

Պարզեցված գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալները՝ տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզներն ու կադաստրային այլ տվյալները, ինչպես նաև ՀՀ մշակույթի նախարարության կողմից վերջին տարիներին կազմված և ճշտված պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը և անհրաժեշտ այլ ելակետային տվյալները ձեռք է բերում նախագծման աշխատանքների Կապալառու կազմակերպությունը: Գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերից ՀՀ ԱԻ նախարարությունը առկայության դեպքում համայնքին տրամադրում է ՀՀ ՍՊԱԾ-ի կողմից կազմված ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման քարտեզի հատված և բնակավայրի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ:

Ընդերքի հետ առնչվող տեղեկատվությունը հնարավոր է ստանալ «Հանրապետական Երկրաբանական Ֆոնդ» ՊՈԱԿ-ից:

---

*նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային և հողաշինական փաստաթղթեր, տարածքի տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզագրման նյութերն ու անշարժ գույքի կադաստրի այլ տվյալները (այդ թվում՝ փաստացի հողօգտագործումների և սեփականության սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն), սահմանված կարգով հաստատված սեյսմիկ շրջանացման և միկրոշրջանացման քարտեզներ, ինժեներա երկրաբանական շրջանացման (պայմանների) քարտեզ, ինչպես նաև երկրաբանական պայմանների վերաբերյալ այլ տեղեկատվությունը, այդ թվում՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ից.*

## 8. Համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ

Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտի տարածքն առանձնացնելիս հնարավորինս զերծ մնալ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող այլ նպատակային նշանակության հողամասեր ներառող լուծումներից:

Ըստ առանձին գոտիների սահմանել հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակներ, առկա քաղաքաշինական իրավիճակի

կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման մանրամասն չափորոշիչներ:

Պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների տարածքները նշել և սահմանված կարգով նախատեսել դրանց կատեգորիաների փոփոխությունները, իսկ(կամ) անհնարինության դեպքում՝ համապատասխան սահմանափակումներ հողօգտագործողների համար (պահպանության գոտու օգտագործման պայմանակարգը՝ ռեժիմը):

---

*անհրաժեշտության դեպքում նշել լրացուցիչ պայմանները*

## 9. Համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները

Համաձայն ՀՀ օրենսդրության, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ սահմանված պարզեցված կազմով և այդ որոշմամբ նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող պահանջներով:

Համայնքի գլխավոր հատակագծի նախագծի կազմում ներառվելու են համայնքի հողերի օգտագործման սխեմայի, ինչպես նաև բնակավայրի և բնակավայրից դուրս կառուցապատման ենթակա տարածքների գոտիավորման նախագծի մշակումը՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» N 625-Ն և ՀՀ կառավարության 2001 թ. մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ N 408-Ն որոշումներով սահմանված՝ նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող պահանջներով:

Համայնքի գլխավոր հատակագծի համալիր փորձաքննությունն ապահովել Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքվող պայմանագրով նախատեսվող պարտավորությունների համաձայն:

Մշակված նախագծի փաթեթը հասարակայնության ներկայացուցիչների քննարկմանն է ներկայացվում ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» N 660 որոշման պահանջներին համապատասխան:

Սեյսմամիկրոշրջանացման աշխատանքներն իրականացնել ըստ ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1352-Ն որոշման 2-րդ կետով նախատեսված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի մարտի 4-ի N 196-Ն հրամանով և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013 թվականի մարտի 13-ի N 69-Ն հրամանով հաստատված «Սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) աշխատանքների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ արտակարգ իրավիճակների և ՀՀ քաղաքաշինության նախարարների համատեղ հրամանի պահանջների:

Ինժեներական համակարգերի առկա իրավիճակի փաստագրման և հեռանկարային զարգացման մասով նախագծային աշխատանքներն իրականացնելիս համագործակցել ջրային, էներգետիկ, կապի մալուխների ցանցերը տնօրինող, շահագործող ընկերությունների հետ:

---

*ի լրումն օրենսդրությամբ սահմանված նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներ (առկայության դեպքում)։*

**9. Սույն Առաջադրանքը ներկայացվում է համաձայնեցման** ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1920-Ն որոշմամբ սահմանված պետական և տարածքային կառավարման մարմինների հետ:

***Առաջադրանքը կազմեց՝***

***Աշխապակազմի երկրորդ կարգի մասնագետ՝*** ***Ա.Մարտիրոսյան***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2014թվականի N 35

## ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ

1. Տալ հավանություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկին, համայնքի Երիտասարդական 1,2,3 փողոցներում գազի խողովակաշար կառուցելու մասին:
2.Տալ հավանություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկին,տարվա ընթացքում միջոցառումներ կազմակերպելու համար( Մշակույթի տան խմակների երեխաների հանգիստը կազմակերպելու նպատակով):
3.Տալ հավանություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկին՝ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՄԱՅՆՔ» անվանակարգով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կայացած մրցույթում 2-րդ տեղը զբաղեցնելու համար, գյուղապետարանի աշխատակազմի և «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության աշխատակիցների համար կազմակերպել միջոցառում բնության գրկում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

22 հուլիս 2014թվական
գ.Աղավնատուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2014թվականի N 36

## ԱՂԱՎՆԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N14 ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի առաջին կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Չեղյալ ճանաչել Աղավնատուն գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 4-ի N14 որոշման 3-րդ կետի հավելվածը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

22 հուլիս 2014թվական
գ.Աղավնատուն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2014թվականի N 37

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հիմք ընդունելով սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից սոցիալապես անապահով ընտանիքներին տալ դրամական օգնություն 320.0 հազար (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 1-ի:
2.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն նորածինների մայրերին 150.0 հազ.(մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 2-ի:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն մահացածների ընտանիքներին 75.0 հազ.(յոթանասուն հինգ հազար)ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 3-ի:
4. Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն 80.0հազար (ութսուն հազար) ՀՀ դրամ Էջմիածնի ԴՈՍԱԱՖ-ու սովորող զորակցիկներին՝ համաձայն հավելված 4-ի:
5.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ ֆինանսական աջակցություն «Արմավիրի մարզի երտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ին 200.0 հազ.( երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 5-ի:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՄԻՍԱԿՅԱՆ ԷԴԻԿ

4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

22 հուլիս 2014թվական
գ.Աղավնատուն

Հավելված1
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 22-ի
թիվ 5 հերթական նիստի N 37 որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՅԱԿ

| ՍՈՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Մաթևոսյան Մայիս | 30000 |
| 2 | Սարգսյան Մայրամ | 30000 |
| 3 | Խաչատրյան Նարեկ | 30000 |
| 4 | Սարգսյան Նշան | 30000 |
| 5 | Խաչատրայն Համլետ | 30000 |
| 6 | Հարությունյան Անահիտ | 30000 |
| 7 | Գևորգյան Կարինե | 30000 |
| 8 | Անտոնյան Սարգիս | 30000 |
| 9 | Սահակյան Ռադիկ | 50000 |
| 10 | Ներսիսյան Սուսաննա | 30000 |
| | Ընդամենը | 320000 |

Հավելված2
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 22-ի
թիվ 5 հերթական նիստի N 37 որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

| ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Աբգարյան Հասմիկ | 25000 |
| 2 | Հարությունյան Գայանե | 25000 |
| 3 | Թադևոսյան Սյուզաննա | 25000 |
| 4 | Թովմասյան Նարինե | 25000 |
| 5 | Ալեքսանյան Նարգիզ | 25000 |
| 6 | Համբարձումյան Գոհար | 25000 |
| | Ընդամենը | 150000 |

Հավելված3
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 22-ի
թիվ 5 հերթական նիստի N 37 որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

| ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Հովհաննիսյան Սուրիկ | 25000 |
| 2 | Նիկողոսյան Բագրատ | 25000 |
| 3 | Բաբայան Սպարտակ | 25000 |
| | Ընդամենը | 75000 |

Հավելված4
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 22-ի
թիվ 5 հերթական նիստի N 37 որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

| ԷՋՄԻԱԾՆԻ ԴՈՍԱԱՖՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Գևորգյան Գագիկ | 20000 |
| 2 | Նիկողոսյան Հովհաննես | 20000 |
| 3 | Հակոբյան Հարություն | 20000 |
| 4 | Հովհաննիսյան Արտյոմ | 20000 |
| | Ընդամենը | 80000 |

Հավելված5
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հուլիսի 22-ի
թիվ 5 հերթական նիստի N 37 որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) | Հաշվեհամար |
|---|---|---|---|
| 1 | «Արմավիրի մարզի երտասարդական նախաձեռնություններ կենտրոն» ՀԿ | 200000 | 1150007561930100 |
| | Ընդամենը | 200000 | |